

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԵՌԼԻՒՆԵԱՆ ԱՒԱՐՏԱԾԱՌԻ ՇՈՒՐԶ

Կոմիտասի մասին բազում գրքեր են գրուել: Նրա կենսագրութեան այն էջում, ուր խօսւում է Բեռլինում ուսանելու տարիների մասին, բոլոր հեղինակները նշում են այն փաստը, որ Շմիդտի մասնաւոր երաժշտանոցի Կոմիտասեան աւարտածառը նուիրուած է եղել քրդական երաժշտութեանը: Սա չափազանց ուշադրաւ հանգամանք է ոչ միայն հայքրդական երաժշտական առընչութիւնների ուսումնասիրման, այլեւ Կոմիտաս գիտնականի կերպարը լիարժէք բնութագրելու առումով: Հանրայաց է այն իրողութիւնը, որ հաւաքելով, մշակելով եւ ուսումնասիրելով հայոց գեղջկական երաժշտութիւնը, Կոմիտասը չէր սահմանափակւում լոկ հայկականը վեր հանելով եւ արժէքաւորելով: Նա մեծ ակնածանքով էր վերաբերում նաեւ այլ ժողովութեների երաժշտական մշակոյթին, գիտակցելով, որ հարեւան ազգերը մշտարեւ մշակութային շփումներով փոխադարձաբար հարստացրել են միմեանց երաժշտական ժառանգութիւնը: Ձգտելով բացայացել հայ երաժշտութեան ինքնատիպութիւնը, Կոմիտասն իր տեսադաշտում է պահել այն բազմազդ միջավայրը, ուր սնուել է հայոց հնօրեայ երաժշտական մշակոյթը:

Ցայժմ, ցաւօք, կոմիտասագէտներին չի յաջողուել յայտնաբերել քրդական երաժշտութեանը վերաբերող վերոնշեալ աշխատութիւնը: Մեզ հասել են միայն տարբեր հեղինակների արձագանքներն այդ մասին: Ահա թէ ինչ է գրում 1931-ին Թողոս Ազատեանն իր մենագրութեան մէջ. «1899 յուլիսին Կոմիտաս Վրդ. կ'աւարտէ երաժշտանոցի տեսական ու գործնական ամբողջ դասընթացքը: Աւարտական թեզն էր «Քիւրտ երաժշտութիւնը», որ մեծ հետաքրքրութիւն արթնցուց իրքեւ աննախ-

ընթաց գործ»<sup>1</sup>:

Այս տեղեկութիւնը գրեթէ նոյնութեամբ գտնում ենք նաև վենետիկի Ս. Ղազար կղզու Միափարեան միաբանութեան անդամ, երաժշտագէտ եւ շարականագէտ Հ. Ղետոնդ Տայեանի լոյս ընծայած գրքոյկում. «Աւարտաճառի նիւթ առած էր «Քիւրտ երաժշտութիւնը», որ մեծ դրուատիկներու արժանացած է»<sup>2</sup>: Ի դէպ, յայտնի է, որ նշուած երկու հեղինակներն էլ անձամբ ճանաչել են կոմիտաս Վարդապետին եւ չի բացառուում, որ հէնց իրենից քաղած լինեն բեռլինեան աւարտաճառին վերաբերող այս յիշարժան տեղեկութիւնը:

Կոմիտասի աւարտաճառի մասին ամէնից հարուստ տեղեկութիւններ է տալիս երաժշտագէտ Ռուբէն Թերլեմեզեանի մենագրութիւնը (որն աւարտուած լինելով դեռևս 1940-ականներին, լոյս է տեսել միայն 10 տարի առաջ). «1899 թ. յուլիսին Կոմիտասն աւարտում է երաժշտական բարձրագոյն կրթութեան դասընթացը: Ըստ ոմանց, Կոմիտասի աւարտական շարադրութիւնը լինում է «Քրդական երաժշտութիւնը»: Մինչեւ հիմա էլ դժուար է պարզել, թէ հայկական ժողովրդական ու եղինակներով կլանուած Կոմիտասն ինչու էր իր համար իրեւ աւարտաճառի նիւթընտրել քրդական երաժշտութիւնը: Ի միջի այլոց, այդ մասին կայ միայն մի յիշատակութիւն (Թորոս Ազատեան): Եթէ այդպէս է, հաւանաբար, եղել է մի հիմնական պատճառ, մի այնպիսի հանգամանք, որ մեզ համար առայժմ մնում է մութ: Հաւանաբար, թեոլին մեկնելուց առաջ Կոմիտասը հաւաքել է քրդական եղանակներ եւ պէսք է ենթադրել, Կոմիտասը կարող էր իր հաւաքած միւթն օգտագործել գիտական ընտիհանրացումների համար»<sup>3</sup>: Վերը նշուած հեղինակը, թերեւս, միակն է, որ փաստը նշելուց բացի, փորձում է խորանալ հարցի հութեան մէջ, ինչ-որ կերպ բացատրել Կոմիտասի աւարտական թեմայի ընտրութեան պատճառները: Նոյն գրքի յաջորդ էջում (էջ 27) Ռ. Թերլեմեզեանը մեջբե-

<sup>1</sup> ԱԶԱՏԵԱՆ ԹՈՐՈՍ, Կոմիտաս Վարդապետ, իր կեանքն ու գործունեութիւնը, Առաջին հատոր, Կ. Պոլիս, 1931, էջ 24, նաեւ նոյն, Կոմիտաս Վարդապետ, կեանքն ու գործունեութիւնը, Պէլլութ, 1935, տպ. «Վահագն», էջ 13:

<sup>2</sup> ՏԱՅԵԱՆ Հ. ՂԵՒՈՆԴ, Կոմիտաս Վարդապետ (Ուսումնասիրական տեսութիւն), Միափարեան տպարան, Ս. Ղազար, 1936, էջ 15 (ծանօթ):

<sup>3</sup> ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ Ռ., Կոմիտաս, Երեւան, 1992, էջ 25-28:

րում է Կոմիտասի Բեռլինում կարդացած դասախոսութիւնների մասին այնտեղ հրատարակուող «Նոր Դար» պարբերականի թղթակցի հաղորդած հետեւեալ ուշագրաւ տեղեկութիւնները. «...Կոմիտասը պատրաստել էր մի խումբ՝ չորս հոգուց բաղկացած, երկու օրինորդ եւ երկու պարոն (հարկաւ՝ գերմանացիներից) քառամայն հայոց եկեղեցական ու ժողովրդական երգերը երգելու: Այդ խումբը երգեց եկեղեցական երգերից. 1. «Փառք Ֆեզ, Տէր», 2. «Օրհնեցէք, գովեցէք», 3. «Այս խորիուրդ լցաւ», 4. «Խկ գարմանալի», 5. «Սուրբ ես, Տէր», 6. «Տէր ողորմեա»: Ժողովրդական երգերից խումբը երգեց 1. «Սոնա եար», 2. «Անձրեւ եկաւ», 3. «Այ աղա, հերովն արի», 4. «Հոյ արէք, սարեր ջան», 5. «Հայրիկ, հայրիկ»: Կոմիտասը երգեց քրդերէն 1. «Լէլէ գավրէ մրնէ», 2. «Հովուի ոչխարճերին ջուր տանելու եւ բերելու եղանակը», 3. «Ազ կոլնգեմ», («Ես կոունկ եմ»), մեկ հատ քրդական պարի եղանակ, արարերէն 1. «Արա էի քագրովնի», 2. «Ձեմիլ քամիլ», 3. «Եալեյի», 4. «Արարի հիջազ», տանկերէն 1. «Խուզի շեր», 2. «Քիմ դեմիշ-դիր», 3. «Բահար ոլդուր», պարսկերէն 1. «Բայարի Շահնազ», 2. «Բայարի Ռուրդ», հայերէն, հայոց պարերից, 1. «Հոտալո ջան», 2. «Հավար Զուլո», 3. «Էլա էրբիս տփի», 4. «Վարդ կօշիկս», 5. «Տուն արի»: Հայր Կոմիտասը պարսկական, քրդական եւ տանկական երգերը երգեց՝ ցոյց տալու համար նրանց եւ հայկական եղանակների միջև եղած տարբերութիւնը<sup>4</sup>: Անշուշտ, սա չափազանց արժէքաւոր տեղեկութիւն է Կոմիտասի Բեռլինում երգացանկի մասին: Այն արտացոլում է մեծ գիտնականի հետաքրքրութիւնների, յիրաւի, միջազգային բնոյթը: Սրա հետ սերտորէն առընչւում է Կոմիտասի ծննդեան հարիւրամեակի առթիւ Նիւ-Եորքում լոյս տեսած յորելեանական ժողովածուի մեջ արծարծուած հետեւեալ միտքը. «...Հայ երաժշտութեան հետ իր ուսումնասիրութիւններուն առարկայ ըրած է մեր հարեւան ժողովուրդներուն, Քիւրտերուն, Արարեներուն, Պարսիկներուն, Վրացիներուն, եւ բիւզանդական երաժշտութիւնները եւս: Այս քանը կարող կ'ընէ զինքը, անշուշտ, մեկ կողմէ ի յայտ բերելու մերինին կրած ազդեցութիւնները, քայլ մանաւանդ խորագոյնս հասկեալու եւ շեշտելու ինչ որ մեր արուեստին մէջ կայ էապէս ինքնուրոյն եւ որով մեր արուեստը կը հակադրուի միւսներուն: Այդ բոլոր երգերը մակերեսային

<sup>4</sup> ԵԴԻԳԱՐ Ա., Հայկական երաժշտութիւնը Բեռլինում, Նոր Դար, 1899, նո. 115 (տե՛ս ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ Ռ., նշ. աշխ., էջ 27-28):

լողութեան համար պիտի շփոքուէին ու նոյնացուէին «արեւելեան» անորոշ պիտակին տակ: Քանի մը «Լելէ» է եւ «Լօլօ» է ու քանի մը երկարաձիգ կանչէ խարուելով, օսարթեր շատ անգամ այդպէս, կը տարուին նոյնացնելու հայ ժողովրդական երգը քրտականին հետ: Խսկական բափանցումը գոր կը կատարէ կոմիտաս Վարդապետ այդ տարրեր երաժշտական ֆոլքլորներուն հաւասարապէս, կարող կ'ընէ զինքը բռնելու եւ շեշտելու էական եւ սկզբնական ինքնուրոյնուրիւնը հայ երգին այդ բոլոր միւսներուն դիմաց»<sup>5</sup>: Սա վերոնշեալ ժողովածուն ամփոփած յօդուածաշարի հեղինակներից մէկի սիհւոքահայ անուանի երաժշտագէտ եւ երգահան Շահան Ռ. Պէրպէտեանի գրչին է պատկանում, որն անձամբ ծանօթ է եղել կոմիտասին եւ փաստօրէն արտայայտում է նաև իր անմիջական տպաւորութիւնները: Այս նոյն յորելեանական ժողովածուի մէջ զետեղուած են նաև ականաւոր երաժշտագէտ Ալեքսանդր Շահվերդեանի յօդուածները, որոնցից առաջինը քաղուած է նրա՝ «Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկներ» հատորից եւ վերնագրուած «Կոմիտասի երգային ծառանգութեան ընդհանուր բնութագիրը»<sup>6</sup>, իսկ երկրորդը՝ «հեղինակի «Կոմիտաս» մենագրութիւնից՝ «Կոմիտաս վարդապետ կենսագրական» վերտառութեամբը»: Ահա վերջինիս բնագիր այն հատուածը, որ հետաքրքրում է մեզ. «1899-ի յունիսին Կոմիտասն աւարտում է ուսումնառութիւնը երաժշտանցում եւ համալսարանում: Նրա քրտական երաժշտութեանը նուիրուած աւարտանար գրաւում է գիտնականների եւ երաժիշտների ուշադրութիւնը՝ ցուցադրելով Կոմիտաս հետազոտողի լիակատար ինքնուրոյնուրիւնն ու հասունուրիւնը: Մեծ հետաքրքրութիւն են առաջացնում Կոմիտասի՝ հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեանը նուիրուած երապարակային դասախոսութիւնները: Նորեքս ստեղծուած Միջազգային Երաժշտական Ընկերութիւնը Կոմիտասին անդամ է ընտրում, երատարակում է նրա աշխատութիւնը եւ դասախոսու-

5 Կոմիտաս Վարդապետ. Անձը եւ գործը. իր ծննդեան հարիւրամեակին առիբով. Comidas Vartabed. His life and work. on the centennial of his birth. Published by the Diocese of the Armenian Church of America, Archbishop Torkom Manoogian, Primate, New York, October, 1969, էջ 18.

6 Կոմիտասի երգային ժառանգութեան ընդհանուր բնութագիրը, տե՛ս ՄԱՆՈՒԿԵԱՆ ԹՈՂԳՈՄ ԱՐՔ., Նշ. աշխ., էջ 46-54:

7 ՄԱՆՈՒԿԵԱՆ ԹՈՂԳՈՄ ԱՐՔ., Նշ. աշխ., էջ 71-78:

թիւնների հաշուետուութիւնը»<sup>8</sup>: Այս մէջբերումը կարեւորւում է երկու առումով. նախ, այն փաստում է, որ խնդրոյ առարկայ աւարտածառը Կոմիտասի հասուն գիտական պրատումների երախայրիքն էր, որն իր մասնագիտական բարձր մակարդակով գրաւել էր ժամանակակիցների ուշադրութիւնը: Երկրորդը՝ Կոմիտասի աւարտածառի անյայտանալու հարցն՝ է, որ պարզապէս անբացատրելի է թում: Դեռևս անցեալ դարում բեռլինեան աւարտածառերը պիտի որ տպագրուելիս լինէին, մանաւանդ եթէ այնքան ուշադրաւ էին, որքան Կոմիտասինը, կամ էլ, առնուազն, գոնէ ձեռագիր վիճակում պահպանուէին երաժշտանոցի արխիւում: Հաւանաբար. այս առումով աւելորդ չի լինի մէջերել Կոմիտասի նամակներից մէկը, որ գրուած է 1899-ին «Անցեալները մեծ յաջողութեամբ երկու դասախոսութիւն կարդացի Բեռլինի երաժշտանոցում հայոց երաժշտութեան մասին առհասարակ եւ արեւելեանի մասին մասնաւոր տեղեկութիւն միայն: Այս կրկին դասախոսութիւնն մեծ զարկ տուաւ երաժշտական աշխարհում յայտնի լինելուս, նամանաւանդ երբ անդամ ընտրուեցայ «Միջազգային երաժշտական ընկերութեան», ուր միայն յայտնի երաժիշտներն են անդամակցում: Դասախոսութիւնն տպել տալու ստիպեցին համալսարանի ուսուցչապետներս եւ ընկերութեան գիտական ժողովածուի երատարակութեան առաջին համարում, որ լոյս կը տեսնէ օգոստոսի մէջ, հիւրընկալնեցաւ իմ յօդուածն էլ, այնպէս որ այժմ ստիպուած եմ տպագրութեան համար պատրաստել եւ հասցնել» (Կարապետ Կաստանեանի արխիւի նամակներից)<sup>9</sup>: Այս դասախոսութիւնից անմիջապէս առաջ, որից յետոյ վերադարձել է էջմիածին եւ, ըստ երեւոյթին, այլեւս առկիթ չի ունեցել զբաղուելու դրա տպագրութեան հարցով: Եւ նոյնիսկ այս պարագայում էլ պէտք է յուսալ, որ մեծն Կոմիտասի ստորագրութիւնը կրող աւարտածառը մի գեղեցիկ օր գեռեւս կարող է յայտնաբերուել բեռլինեան արխիւներում: Ինչեւէ, հայկական եւ արեւելեան երաժշտութեան մասին Կոմիտասի տպաւորիչ դասախոսութիւնների շնորհիւ, որոնք ուղեկցուում էին բազմազան երաժշտական նմոյշների հմուտ կատարմամբ, նրա շուրջ համընդհանուր հիացմունքի այնպիսի ջերմ մթնոլորտ էր առաջացել, որ ժամանա-

<sup>8</sup> А. И. ШАВЕРДЯН, Комитас, изд. П, дополненное, Советский композитор, М., 1989, с. 69.

<sup>9</sup>Տե՛ս ԹԵՐԼԵՄԵՁԵԱՆ Ռ., նշ. աշխ., էջ 26-27:

Կի մեծագոյն մասնագէտներն իրենց պարտքն էին համարել նշել կոմիտասի հետազօտութիւնների տպագրութեան անհրաժեշտութիւնը։ Աւա մի փոքրիկ հատուած Միջազգային երաժշտական Ընկերութեան նախադաս եւ թեոլինի արքայական համալսարանի երաժշտութեան պատմութեան ուսուցչապետ Օսկար Ֆլայշերի նամակից։ «Դուք արդի գիտութեան անգին ծառայութիւններ կարող եք մատուցանել, եթէ Ձեր աշխատութիւնները երատարակեք, եւ այդ առքիւ, եթէ կարողանամ օժանդակութիւնս ընծայել Ձեզի, մեծ ուրախութիւն մը պիտի զգամ։»

### Մեծագոյն յարգանօֆ Զեր անձնուեր Օսկար Ֆլայշեր<sup>10</sup>:

Այս եւ նման այլ նիւթեր հաւաստում են, որ լատ արժանայն գնահատուելով եւրոպական ամենահեղինակաւոր մասնագէտների կողմէց, կոմիտասի թեոլինում ուսումնասիրութիւնները չէին կարող ի սպառ անհետանալ գիտական ասպարհզից։

Ասենք նաեւ, որ քրդական երաժշտութեան վերաբերեալ միակ տպագիր նիւթը 1903-ին Մոսկուայում հրատարակուած «Քրդական եղանակներ» պրակն է, որը լոյս է տեսել նաեւ որպէս Ս. Հայկունու «Հայ-քրդական վեպ» աշխատութեան յաւելուած<sup>11</sup> եւ պարունակում է կոմիտաս Վարդապետի կատարած քրդական տասներեք վիպերգերի նոտագրութիւնները՝ եւրոպական ձայնագրութեամբ։ Երգերի բնագրերը քրդերէն են՝ լատինագիր եւ հայագիր տառադարձութեամբ։ Յետագայում, 1982-ին, Վենետիկի Ս. Ղազար կղզում, այդ եղանակները վերահրատարակուել են KAMAR մատենաշարի չորրորդ գրքոյկով, կցելով անգլերէն եւ իտալերէն հակիրճ առաջարանները<sup>12</sup>։ Այս մատենաշարով, ճաշակով ձեւաւորուած գեղեցիկ գրքոյկներով լոյս են տեսնում գրականութեան եւ արուեստի տարբեր ճիւղերին վերաբերող բազմազան ուշագրաւ նիւթեր։ Յատկապէս մեծ հոգածութիւն է ցուցաբերւում ազգային փոքրա-

<sup>10</sup> Անդ, էջ 29:

<sup>11</sup> Կմինեան ազգագրական ժողովածու, հա. 6, Մոսկուա-Վաղարշապատ, 1904, յաւելուած։

<sup>12</sup> Քրդական եղանակներ. Զայնագրեց Կոմիտաս Վարդապետ. Melodies Kurdes Recueillies par Archimandrite Comitas. Kamar / 4. 1982. I/COM. Istituto per la diffusione delle conoscenze sulle culture minoritarie. Tipò - Litografia Armena - Isola di S. Lazarro - Venezia, April 1982 / 400 copies.

մասնութիւնների մշակութային ժառանգութեան լուսաբանմանը։ Այսպիսով, հրատարակիչներ Պասիֆիսիի եւ Վահրամեանի շնորհիւ առանձին գրքոյկով առկայ է Կոմիտասի կատարած քրդական 13 վեպերգերի անզուգական ձայնագրութիւնների մի բազմերանգ փունջ, որը նշանակալից ներդրում է հաւասարապէս թէ՝ քրդագիտութեան, թէ՝ հայոգիտութեան ասպարէզում։ Յայտնի է, որ Կոմիտասը, որեւէ մեղեդի գրառելիս, արդէն իսկ մտովի մշակում էր այն։ Այս դէպօւմ նոյնպէս, միանգամայն հաւատարիմ մնալով քրդական ինքնատիպ մեղեդիական կերտուածքին, նա կարողացել է վերարտագրել կատարեալ երաժշտական նմոյլներ, որոնք ցայտուն կերպով արտացոլում են քրդական բանահիւսութեան երաժշտական բնոյթը։ Պատահական չէ, որ Կոմիտասն ընտրել է յատկապէս Վիպերգի ժամանք։ Հի՞ որ այն առաւելագոյնն է արտացոլում քուրդ ժողովութիւնի երաժշտական խառնուածքը։ Յայտնի է, որ իրենց աւանդավէպերը պատմելիս նրանք երբեմն խօսքն ընդմիջել են երգով։ «Եմինեան Ազգագրական ժողովածու»-ի (այսու՝ իԱԺ) հինգերորդ հատորն ամբողջութեամբ նուիրուած է Ս. Հայկունու հաւաքած հայքրդական վիպերին։ Այն պարունակում է ընդամէնը 28 պատում, որոնցից վերջին երկուսը յաւելուած են առաջին 26-ին, իսկ այս ամէնին յաւելուած է Կոմիտասի նոտագրած 13 երգը։ Աւանդավէպերից ոչ բոլորն ունեն երգային յաւելուած։ Այն վիպերը, որոնց կցուած են նոտագրուած երգերը, նշուած են աստղանիշով։ Դրանք են՝ 6. Ղանտիլի Սիափուշ եւ Հեօգբեկ (համապատասխանաբար՝ 1. Ղանդիլի Սիափուշ), 7. Լէյլի Մէջլում (2. Լէյլու Մէջնում), 8. Զամբալի (3. Զամբալիէ), 11. Հասամ Աղա (4. Հասամ աղա), 14. Միրզա աղէն, Թէլի Աղան (5. Միրզա աղա), 15. Քուլլըք ու Կեառօ (6. Քուլլըք Գեառօ), 16. Քուլլըք ու Կեառօ (7. Քիւլլըք Գեառօ)<sup>13</sup>, 20. Մամու Զիմ (8. Մամ-զիմ)<sup>15</sup>, 22. Եզդի Դերզիշի Աւդի (9. Դարզիշի Աւդի), 23. Սեւահաջէ (10. Սեւահաջէ), 24. Համուտէ Շանկէ (11. Համըդէ Շանդէ), 25. Համէ Մուսէ (12. Համէ Մուսէ), 28. Մոլլա Մու-

<sup>13</sup> Այս եւ յետագայ համարակալուներն, «Եմինեան Ազգագրական ժողովածու»-ից են, առաջինները տես նիւթերի ցանկում, երկրորդները՝ նոտային յաւելուածում։

<sup>14</sup> Սրանք նոյն զրոյցի տարբեր պատումներն են, որոնց կցուած են տարբեր երգային հատուածներ։ Սրանցից առաջինն ունի հետեւեալ ծանօթագրութիւնը։ «Վէդային հատուածներ» Սրանցից առաջինն է Սուրմալուի Կուլքա հայ գիւղի մեջ։ ամբողջովին երգ է եւ քրդերէն շատ խրոխու կ'երգուի... (տես իԱԺ, էջ 131, ծան.)»։

<sup>15</sup> Յաջորդ՝ 21-րդը, նախորդի ոտանաւոր տարբերակն է եւ կոչւում է «Մամազին»։

*սի Սայրան (13. Սայրան):*

Նախ, կ'անդրադառնանք այն հարցին, թէ վերը նշուած աւանդավէպերն ինչու<sup>16</sup> են վերնագրուել հայքրդական վէպ: ԷԱԺ-ի խմբագիր, բազմահմուտ գիտնական Գրիգոր Խալաթեանցն այսպիսի բացատրութիւն է տալիս. «Ներկայ գիրքը, որ «Եմինեան Ազգագրական ժողովածուի» իինգերորդ մասը, պարունակում է իւր մէջ քրդական վէպեր, որ շրջում են Վասպուրականի հայ ժողովրդի երանում տեղային այլեւայլ բարբառներով. այս է պատճառը, որ ներկայ հատորը մենք Հայ-Քրդական վէպ անուանեցինք»<sup>16</sup>: *Սա նշանակում է, որ հայքրդական մշակութային առընչութիւնները սկզբնաւորուել են դարերի խորում եւ չեն սահմանափակում լոկ երաժշտական կապերով:* Ինչ վերաբերում է վերոյիշեալ վէպերի երաժշտական հատուածներին, Վասպուրականի տարրեր գիւղերում դրանք յաճախ կատարել են նաեւ հայերը, երբեմն երգերն էլ ինչ-որ չափով հայկականացել են: *Սա է հաւաստում նաեւ քուրդ երաժշտագէտ նուրի Զառուարին իր «Քրդական ժողովրդական երգարուեստը» գրքում.* «Կոմիտասի այս ձայնագրութիւններում (եւս) կան այնպիսի նմոյշներ, որոնք պարզապես կարելի է անուանել հայքրդական երգեր: Դրանցից են «Լեյլա Մեզնում» և «Համե Մուսէ» երգերը: Առաջինն իր ինտոնացիոն կառուցուածքով յիշեցնում է Սպ. Մելիքեանի ձայնագրած «Զողորիմին» («Սասունցի Դաւիթ» վիպերգից), իսկ երկրորդը՝ Կոմիտասի նոյն տարիներին ձայնագրած «Ապարանի հորովելը»: Հնարաւոր է, որ հայկական երաժշտութեան ազդեցութիւնը կրած լինի այն անձնաւորութիւնը, որ երգել է Կոմիտասի համար: Առաւել հաւանականը, սակայն, այն է, որ երկու հարեւան ժողովուրդների մշակոյթները փոխազդուել են միմեանց և նրանցում ստեղծուել են ընդհանրութիւններ, որոնք այդ ժողովուրդների դարաւոր համակեցութեան և բարեկամութեան արտայայտութիւններից են»<sup>17</sup>:

Հարկ է նշել, որ Կոմիտասից յետոյ շատերն են զբաղուել քըրդական երաժշտական ֆոլկլորի ձայնագրութեամբ (Սպ. Մելիքեան, Կ. Զաքարեան, Ս. Գասպարեան, Ա. Քոչարեան, Մ. Թումանան, Ջ. Զալիլ, Ն. Զառուարի), սակայն, թէեւ հրատարակուած գրառումները պատկառելի քանակ են կազմում, ինչ-որ առումով միակողմանի

<sup>16</sup> Տե՛ս ԷԱԺ, էջ VI:

<sup>17</sup> ԶԱՌՈՒԱՐԻ Ն. Հ., Քրդական ժողովրդական երգարուեստը, Եր., 1976, էջ 24-25:

են ներկայացնում քրդական ֆոլկլորը, որովհետեւ դրանց հիմնական մասը գեղջկական պարզ պարերգեր են: Ուշագրաւ է Կոմիտասեան ձայնագրութիւնների ն. Զառւարիի գնահատականը. «Լինելով շանասէր փնտրումների ու բծախնդիր ընտրութեան արդիւնք, այդ գրառումներից իւրաքանչիւրը գիտական ուսումնասիրութեան համար հարուստ նիւթ է տալիս: Դրանք միաժամանակ իւրատեսակ ուղեցոյց են քրդական, մասնաւորապէս լայնաշունչ երգերի գրառման սկզբունքներն ու տեխնիկան իւրացնելու առումով»<sup>18</sup>: Հարկ է նշել, որ նոյնիսկ ունենալով Կոմիտասի ձայնագրած 13 վիպերգերի նոտաները, քրդական երաժշտական ֆոլկլորի յետագայ գրառողները սկզբնական շրջանում գիտակցաբար խուսափել են բարդ մեղեդիներ ձայնագրելուց՝ հինգ տեխնիկական դժուարութեան պատճառով: Ահա թէ ինչ է գրում Զ. Զալիլը «Քրդական ժողովրդական երգերի» իր առաջին ժողովածուի առաջարանում. «Հերոսական երգերի մեղեդիները բարդ են և նոտային ձայնագրման համար դժուար»<sup>19</sup>: Այսպիսով, Կոմիտասի ձայնագրութիւնները տուեալ ժանրի ամենակատարեալ նմոյշներն են եւ ունեն բացառիկ կարեւորութիւն: Դրանք հիմնականում երգչական ծաւալում դիապազոն ընդգրկող լայնաշունչ մեղեդիներ են, որոնք արտացոլում են տուեալ վիթապական պատումի հանգուցային դրուագներից մէկը, սովորաբար ամենամեծ յուզական լիցք կրող պահը, որը կարող է լինել պատումի բարձրակէտը:

Ամփոփելով ասուածը, բոլոր հիմքերը կան պնդելու, որ Կոմիտասն իր այս ձայնագրութիւններով անդարձ կորստից փրկել է քրդական ազգային մշակութային հարստութեան մի նշանակալից բեկոր: Սա ժողովրդի ստեղծած գանձերն արձանագրելու եւ դրանք կրկին այդ նոյն ժողովրդին վերադարձնելու մի հոյակապ օրինակ է, որով մեծն Կոմիտասը ոչ միայն սեփական ժողովրդի, այլեւ դրացի այլ ազգերի դարաւոր արժէքները յաւերժացնելու աւանդոյթի հիմնադիրը դարձաւ:

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ

<sup>18</sup> ԶԱՅԻՄԻ ՆՈՒՆԵ, Քրդական ժողովրդական երգեր, Երեւան, 1983, էջ 5-6:

<sup>19</sup> ԶԱԼԻԼ Զ., Քրդական ժողովրդական երգեր, 1964, էջ 5-6

## Refelections on komitas vardapet's Berlin thesis (summary)

Arpy Vardumian

The great Armenian composer, musicologist, singer, conductor and folklorist Komitas Vardapet (archimandrite), during all his music-related activities, was also constantly involved in the notation and cultivation of Armenian folk music. Many valuable works of other nations' folklore, which have had close links with the musical mindset of the Armenian people, have not escaped his keen attention either. For that reason in 1898, while graduating with honors from Schmidt Conservatory in Berlin, Komitas Vardapet made Kurdish folk music the object of his thesis, 13 songs of which he had recorded in Western Armenian provinces and villages. Printed in 1903 in Volume 5 of the Eminian Ethnographical Collection in Moscow, these sterling recordings, published in the European notation, were preserved and later, in 1982, reprinted at the St Lazarus Island in Venice, in the 4th part of the "KAMAR" series. As for the text of the Berlin Thesis, it is considered irreversibly lost to Armenian musicology. The author of this article is full of the hope that this thesis might have been preserved up to today in the archive of the above-mentioned Conservatory and that one day, as a result of a thorough search, the text of Komitas Vardapet's Berlin thesis will finally be found, which will be a significant service not only to Armenian musicology, but also to the study of the history of music and folklore in general.